ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/20

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Ջիարջի» և «ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ-ի տնօրեն Է. Փոթոյանի (պետական գրանցման համարներ համապատասխանաբար՝ 273.110.1156506, 273.110.1148876),

քննելով «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0101» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում 23.02.2022թ. «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը և «ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ-ի համանման բողոքը (24.02.2021թ. վարույթ ընդունված) (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/20 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Ջիարջի» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտարարել է ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0101 ծածկագրով գնանշման հարցում, որին հայտ է ներկայացրել նաև «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն:

16.12.2021թ.-ին «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից էլեկտրոնային փոստի միջոցով ստանում ենք գնահատող հանձնաժողովի բացման նիստի թիվ 2 արձանագրությունը, որում առկա է նաև շտկման պահանջ /կից ներկայացնում ենք/: «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն ներկայացնում է շտկված հավելված 1.1-ը հաջորդ օրը՝ 17.12.2021.

Որից հետո պատվիրատուից ստանում ենք գրություն, որ մեր կողմից ներկայացված շտկումները չեն ընդունվում, քանի որ ներկայացվել են 18 րոպե ավելի ուշ՝ ժամը 14:18-ին մինչդեռ սահմանված էր ժամկետ մինչև 17.12.2021-ի ժամը 14:00-ն /կից ներկայացնում ենք/:

Մեր միջև բանավոր քննարկումների արդյունքում, լսելով մեր փաստարկները, որ մասնակիցը իրավունք ունի ուղարկելու շտկված փաստաթղթերը մինչև շտկման պահանջը ստանալուն օրվան հաջորդող աշխատանքային օրվան ավարտը, պատվիրատուն կասեցնում է ընդացակարգը և գրավոր դիմում ֆինանսների նախարարություն սույն հարցով պարզաբանում ստանալու համար /կից ներկայացնում ենք/:

Ստանալով ՀՀ ֆինանսների նախարարության թիվ 03/26/551-202 պատասխանը, պատվիրատուն չի ընկալում տրամադրված պատասխանի իմաստը և մերժում է մեր կազմակերպության հայտը:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ և 42-րդ կետերի՝

41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված

տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ սույն հարցի շուրջ նմանատիպ որոշում կայացվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի կողմից թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/07 որոշումով:

Բողոք ներկայացրած անձի պահանջ

Խնդրում ենք Ձեզ պարտավորեցնել պատվիրատուին չեղարկել 2021 թ-ի դեկտեմբերի 17-ի թիվ 2, դեկտեմբերի 24-ի թիվ 4, 2022թ-ի հունվարի 19-ի թիվ 5 արձանագրությունները:

Խնդրում ենք Ձեզ պարտավորեցնել պատվիրատուին ընդունելու մեր կողմից ներկայացված շտկումը, քանի որ շտկումը ներկայացվել է համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ և 42-րդ կետերի պահանջների»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 04.03.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>«ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ-ն ներկայացված համանման բողոքով հայտնել է հետևյալը.

«Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտարարել է ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0101 ծածկագրով գնանշման հարցում, որին հայտ է ներկայացրել նաև «ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ-ն:

16.12.2021թ-ին «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից էլեկտրոնային փոստի միջոցով ստանում ենք գնահատող հանձնաժողովի բացման նիստի թիվ 2

արձանագրությունը, որում առկա է նաև շտկման պահանջ /կից ներկայացնում ենք/: «ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ-ն ներկայացնում է շտկված հավելված 1.1-ը հաջորդ օրը՝ 17.12.2021.

Որից հետո պատվիրատուից ստանում ենք գրություն, որ մեր կողմից ներկայացված շտկումները չեն ընդունվում, քանի որ ներկայացվել են 43 րոպե ավելի ուշ՝ ժամը 14:43-ին մինչդեռ սահմանված էր ժամկետ մինչև 17.12.2021-ի ժամը 14:00-ն /կից ներկայացնում ենք/:

Մեր միջև բանավոր քննարկումների արդյունքում, լսելով մեր փաստարկները, որ մասնակիցը իրավունք ունի ուղարկելու շտկված փաստաթղթերը մինչև շտկման պահանջը ստանալուն օրվան հաջորդող աշխատանքային օրվան ավարտը, պատվիրատուն կասեցնում է ընդացակարգը և գրավոր դիմում ֆինանսների նախարարություն սույն հարցով պարզաբանում ստանալու համար /կից ներկայացնում ենք/:

Ստանալով ՀՀ ֆինանսների նախարարության թիվ 03/26/551-202 պատասխանը, պատվիրատուն չի ընկալում տրամադրված պատասխանի իմաստը և մերժում է մեր կազմակերպության հայտը:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ և 42-րդ կետերի՝

41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք , որ սույն հարցի շուրջ նմանատիպ որոշում կայացվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի կողմից թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/07 որոշումով:

Բողոք ներկայացրած անձի պահանջ

Խնդրում ենք Ձեզ պարտավորեցնել պատվիրատուին չեղարկել 2021 թ-ի դեկտեմբերի 17-ի թիվ 2, դեկտեմբերի 24-ի թիվ 4, 2022թ-ի հունվարի 19-ի թիվ 5 արձանագրությունները:

Խնդրում ենք Ձեզ պարտավորեցնել պատվիրատուին ընդունելու մեր կողմից ներկայված շտկումը, քանի որ շտկումը ներկայացվել է համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ և 42-րդ կետերի պահանջների:

«ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 04.03.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

3. <u>«Հրազդան բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 25.02.2022թ. թիվ ՀԲԿ-Ե-109 և 28.02.2022թ. թիվ ՀԲԿ-Ե-112 գրություններով հայտնել է հետևյալը

«Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 2021թ. դեկտեմբերի 6-ին դեղորայքի ձեռբերման հայտարարվել է ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0101 ծածկագրով մրցույթ: Մրցույթին հայտ ներկայացրած «Ջիարջի» և «ԷՖԲԻԷՅ» ՍՊ ընկերություններից՝ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2021թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի, 32-րդ կետի 1-

ին ենթակետի զ) կետի, 41-րդ կետի, հրավերի 4.3-րդ կետի 2-րդ ենթակետի և 8.9 կետի պահանջվել է հավելված 1.1-ի շտկումները և կասեցվել է նիստը /արձանագրություն 2/: Շտկումները ներկայացվել են կասեցման ժամկետից ուշ: Այդ մասն ծանուցվել է մասնակիցներին և նշվել, որ մերժվում է հայտերը /արձանագրություն2/, իսկ մնացած մասնակիցները հրավիրվել են բանակցությունների /Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս: Մասնակիցը ներկայացրել է բանավոր բողոք՝ վերը նշված վերաբերյալ: Բողոքի վերաբերյալ 30.12.2021թ. մեր կողմից հարցում է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն /հարցում արձանագրություն 4/: Նախարարույթունից ստացվել է պարզաբանում՝ հիմք ընդունելով Կարգի 41.րդ և 42-րդկետերը /պարզաբանում արձանագրություն 5/: Համաձայն պարզաբանման ծանուցվել է «Ջիարջի» և «ԷՖԲԻԷՅ» ՍՊ ընկերություններին /ծանուցումներ/: 2022թ. հունվարի 19-ի թիվ 5 արձանագրությամբ որոշվել են հաղթող մասնակիցները և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 19ին կետի համաձայն՝ Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է տեղեկագրում և անգործության ժամկետ է սահմանել ծանուցման օրվան հոջորդող օրվանից հաշված 5-րդ օրացուցային օր /հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին/, իսկ 72-րդ և 85-րդ չափաբաժիններով մրցույթը կասեցվել է՝ մինչև մասնակիցներից, ՀՀ առողջապահության և ֆինանսների նախարարություններից պարզաբանումներ ստանալը: Անգործության ժամկետի ավարից հետո /26 հունվար-31 հունվար 2022թ./, Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի 01.02.2022թ. պայմանագրերի նախագծերը ուղարկվել են հաղթող մասնակիցներին և 02.02.2022թ. կնքվել են պայմանագրերը /կնքված պայմանագրերի մասին հայտարարություն/:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 04.03.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ԳԲՔԱ-ՆԳ-2022/20 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2022/20 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0101» ծածկագրով

գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որը խմբավորված է 101 չափաբաժիններում:

2. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտեր են ներկայացրել «Ջիարջի» և «ԷՖԲԻԷՅ» ՍՊ ընկերությունները:

3. «ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Ընթացակարգի 57-60-րդ չափաբաժինների մասով, իսկ «Ջիարջի» ՍՊԸ-ն՝ 1-9-րդ, 11-15-րդ, 17-18-րդ, 20-35-րդ, 39-40-րդ, 43-44-րդ, 49-50-րդ, 52-56-րդ, 63-79-րդ, 82-րդ, 84-րդ, 86-91-րդ, 93-րդ, 95-րդ, 98-101-րդ չափաբաժինների մասով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.12.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ջիարջի» և «ԷՖԲԻԷՅ» ՍՊ ընկերությունների հայտում, մասնավորապես՝ հավելված 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, արձանագրվել են անհամապատասխանություններ, և որոշում է կայացվել ~~կասեցնել~~ Ընթացակարգը՝ առաջարկելով ընկերություններին շտկված տարբերակները ներկայացնել մինչև ս/թ. դեկտեմբերի 17-ը ժամը 14:00-ն:

5. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել մերժել «Ջիարջի» և «ԷՖԲԻԷՅ» ՍՊ ընկերությունների հայտերը, այն հիմնավորմամբ, որ փաստաթղթերի շտկված տարբերակներն անհրաժեշտ էր ներկայացնել մինչև ս/թ. դեկտեմբերի 17-ը ժամը 14:00-ն, մինչդեռ՝ ընկերությունների կողմից շտկումները ներկայացվել են ուշ, այն է՝ «Ջիարջի» ՍՊԸ-ն՝ ժամը 14:18-ին, իսկ «ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ-ն ժամը 14:43-ին:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ ընկերությունների հայտերը մերժվել են, սակայն տնօրենի կողմից եղել է բանավոր առարկություն, որ 1 աշխատանքային օրը մինչև օրվա ավարտն է, այլ ոչ թե որոշակի ժամկետ և որոշում է կայացվել հարցում ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն, նշվածի վերաբերյալ պարզաբանում ստանալու վերաբերյալ:

7. Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարության ուղղված 30.12.2021թ. թիվ ՀԲԿ-Ե-667 գրությամբ մասնավորապես հայտնել է, որ ««Ջիարջի» և «ԷՖԲԻԷՅ» ՍՊ ընկերություններից պահանջվել է շտկում: Շտկման վերաբերյալ արձանագրությունը ընկերությանը ուղարկվել է դեկտեմբերի 16-ին, սահմանելով, որ ընկերությունը շտկումը պետք է կատարի 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ դեկտեմբերի 17-ը ժամը 14:00, սակայն ընկերությունների կողմից շտկումը

կատարվել է կասեցման ժամկետի ավարտից ուշ, արդյունքում Կարգի 42-րդ կետի և հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ սահմանված ժամկետում չներկայացնելու հիմքով պայմանավորված մերժվել են «Ջիարջի» և «ԷՖԲԻԷՅ» ՍՊ ընկերությունների հայտերը: Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն խնդրել է պարզաբանել, արդյոք ընկերությունների հայտերը ենթակա են մերժման, թե ոչ»:

8. Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ վկայակոչելով Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 34-րդ հոդվածի 1-ին մասը, Կարգի 41-րդ և 42-րդ կետերը՝ հայտնել է, որ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Ջիարջի» և «ԷՖԲԻԷՅ» ՍՊ ընկերությունների հայտերը մերժելու և անգործության ժամկետ սահմանելու վերաբերյալ:

10. «Ջիարջի» և «ԷՖԲԻԷՅ» ՍՊ ընկերությունները ներկայացված բողոքներով վիճարկում են Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումները՝ «Ջիարջի» և «ԷՖԲԻԷՅ» ՍՊ ընկերությունների հայտերը մերժելու վերաբերյալ և խնդրել են Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին պարտավորեցնել Պատվիրատուին ընդունելու ընկերությունների կողմից ներկայաված շտկումները, քանի որ շտկումները ներկայացվել են համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ և 42-րդ կետերի պահանջների:

11. Կնքված պայմանագրերի մասին հայտարարության համաձայն՝ 02.02.2022թ.-24.02.2022թ. կնքվել են պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագրեր, իսկ 10-րդ, 15-րդ, 38-րդ, 39-րդ, 54-րդ և 79-րդ չափաբաժինների մասով Ընթացակարգը Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով հայտարարվել է չկայացած:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով 23.02.2022թ. «Ջիարջի» և «ԷՖԲԻԷՅ» ՍՊ ընկերությունների բողոքները՝ կից փաստաթղթերով, «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 25.02.2022թ. թիվ ՀԲԿ-Ե-

109 և 28.02.2022թ. թիվ ՀԲԿ-Ե-112 գրությունները՝ կից փաստաթղթերով, և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածը սահմանում է՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

<u>Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:</u>

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝

1. պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

2. եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, ***<u>բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:</u>***

Այսպես, «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0101» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որը խմբավորված է 101 չափաբաժիններում:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտեր են ներկայացրել «Ջիարջի» և «ԷՖԲԻԷՅ» ՍՊ ընկերությունները:

«ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Ընթացակարգի 57-60-րդ չափաբաժինների մասով, իսկ «Ջիարջի» ՍՊԸ-ն՝ 1-9-րդ, 11-15-րդ, 17-18-րդ, 20-35-րդ, 39-40-րդ, 43-44-րդ, 49-50-րդ, 52-56-րդ, 63-79-րդ, 82-րդ, 84-րդ, 86-91-րդ, 93-րդ, 95-րդ, 98-101-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.12.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ջիարջի» և «ԷՖԲԻԷՅ» ՍՊ ընկերությունների հայտում, մասնավորապես՝ հավելված 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, արձանագրվել են անհամապատասխանություններ, և որոշում է կայացվել կասեցնել Ընթացակարգը՝ առաջարկելով ընկերություններին շտկված տարբերակները ներկայացնել մինչև ս/թ. դեկտեմբերի 17-ը ժամը 14:00-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել մերժել «Ջիարջի» և «ԷՖԲԻԷՅ» ՍՊ ընկերությունների հայտերը, այն հիմնավորմամբ, որ փաստաթղթերի շտկված տարբերակները անհրաժեշտ էր ներկայացնել մինչև ս/թ. դեկտեմբերի 17-ը ժամը 14:00-ն, մինչդեռ՝ ընկերությունների կողմից շտկումները ներկայացվել են ուշ, այն է՝ «Ջիարջի» ՍՊԸ-ն՝ ժամը 14:18-ին, իսկ «ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ-ն ժամը 14:43-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ ընկերությունների հայտերը մերժվել են, սակայն տնօրենի կողմից եղել է բանավոր առարկություն, որ 1 աշխատանքային օրը մինչև օրվա ավարտն է, այլ ոչ թե որոշակի ժամկետ և որոշում է կայացվել հարցում ուղարկել ՀՀ

ֆինանսների նախարարություն, նշվածի վերաբերյալ պարզաբանում ստանալու վերաբերյալ:

Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարության ուղղված 30.12.2021թ. թիվ ՀԲԿ-Ե-667 գրությամբ մասնավորապես հայտնել է, որ «Ջիարջի» և «ԷՖԲԻԷՅ» ՍՊ ընկերություններից պահանջվել է շտկում: Շտկման վերաբերյալ արձանագրությունը ընկերությանը ուղարկվել է դեկտեմբերի 16-ին, սահմանելով, որ ընկերությունը շտկումը պետք է կատարի 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ դեկտեմբերի 17-ը ժամը 14:00, սակայն ընկերությունների կողմից շտկումը կատարվել է կասեցման ժամկետի ավարտից ուշ, արդյունքում Կարգի 42-րդ կետի և հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ սահմանված ժամկետում չներկայացնելու հիմքով պայմանավորված մերժվել են «Ջիարջի» և «ԷՖԲԻԷՅ» ՍՊ ընկերությունների հայտերը: Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն խնդրել է պարզաբանել, արդյոք ընկերությունների հայտերը ենթակա են մերժման, թե ոչ:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ վկայակոչելով Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 34-րդ հոդվածի 1-ին մասը, Կարգի 41-րդ և 42-րդ կետերը՝ հայտնել է, որ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Ջիարջի» և «ԷՖԲԻԷՅ» ՍՊ ընկերությունների հայտերը մերժելու և անգործության ժամկետ սահմանելու վերաբերյալ:

«Ջիարջի» և «ԷՖԲԻԷՅ» ՍՊ ընկերությունները ներկայացված բողոքներով վիճարկում են Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումները՝ «Ջիարջի» և «ԷՖԲԻԷՅ» ՍՊ ընկերությունների հայտերը մերժելու մասով և խնդրել են Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին պարտավորեցնել Պատվիրատուին ընդունելու ընկերությունների կողմից ներկայացված շտկումները, քանի որ շտկումները ներկայացվել են համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ և 42-րդ կետերի պահանջների:

Կնքված պայմանագրերի մասին հայտարարության համաձայն՝ 02.02.2022թ.-24.02.2022թ. կնքվել են պետության կարիքների համար ապրանքների մատակարարման

պայմանագրեր, իսկ 10-րդ, 15-րդ, 38-րդ, 39-րդ, 54-րդ և 79-րդ չափաբաժինների մասով Ընթացակարգը Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով հայտարարվել է չկայացած:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/0101» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի կողմից ***02.02.2022թ.-24.02.2022թ. կնքվել են պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրեր, որպիսի պայմաններում, համաձայն Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի բ) ենթակետի, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը կնքված պայմանագրերով նախատեսված չափաբաժինների մասով ներկայացված բողոքների քննության արդյունքում պայմանագրերն անվավեր ճանաչելու մասին որոշում կայացնելու իրավասությամբ օժտված չէ:***

Ուստի վերոգրյալի հաշվառմամբ «ԷՖԲԻԷՅ» և «Ջիարջի» ՍՊ ընկերությունների բողոքները՝ կնքված պայմանագրերով նախատեսված չափաբաժինների մասով, ենթակա են մերժման:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի 10-րդ, 15-րդ, 38-րդ, 39-րդ, 54-րդ և 79-րդ չափաբաժիններին, որոնց մասով Ընթացակարգը հայտարարվել է չկայացած, ապա արձանագրում եմ, որ նշված չափաբաժիններով «ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ-ն հայտ չի ներկայացրել, իսկ «Ջիարջի» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 15-րդ, 39-րդ, 54-րդ և 79-րդ չափաբաժինների մասով, որպիսի պայմաններում բողոքը քննության առարկա է դառնում միայն 15-րդ, 39-րդ, 54-րդ և 79-րդ չափաբաժինների մասով:

Այսպիսով՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման

դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***<u>ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***<u>ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով</u>***

<u>տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝ Պատվիրատուն՝ «Ջիարջի» ՍՊԸ-ի հայտում արձանագրելով անհամապատասխանություններ՝ շտկման վերաբերյալ համաձայն՝ Պատվիրատուի ՀՀ ֆինանսների նախարարության ուղղված 30.12.2021թ. թիվ ՀԲԿ-Ե-667 գրության՝ ծանուցել է 16.12.2021թ. և ծանուցմամբ անհամապատասխանությունների շտկման վերջնաժամկետ սահմանել 17.12.2021թ. ժամը 14:00-ն, իսկ «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից շտկումը ներկայացվել է նույն օրվա ժամը 14:18-ին, որպիսի պայմաններում արձանագրում եմ, հետևյալը.

Այսպիսով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ***<u>ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային</u>*** տարվա, ամսվա և ***<u>ամսաթվի</u>*** կամ ***<u>այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից</u>***, որով որոշված է ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ***<u>ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:</u>***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:</u>***

Մինչդեռ՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ և 32-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված պահանջները, այն է՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.12.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ անհամապատասխանությունների շտկման վերջնաժամկետ սահմանելով 17.12.2021թ. մինչև 14:00-ն, արդյունքում՝ 17.12.2021թ. ժամը 14:18-ին «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկումը՝ մեկ աշխատանքային օրը լրացած չլինելու պայմաններում (մեկ աշխատանքային օր ժամկետը լրանում է 17.12.2021թ. ներառյալ) որոշում է կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ, որպիսի պայմաններում գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, հետևաբար գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է դադարեցնի Ընթացակարգը 15-րդ, 39-րդ, 54-րդ և 79-րդ չափաբաժինների մասով

չկայացած հայտարարելու մասին որոշումը և քննության առարկա դարձնի «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից 15-րդ, 39-րդ, 54-րդ և 79-րդ չափաբաժնների մասով որպես շտկում ներկայացված փաստաթուղթը:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ «Ջիրաջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Էֆբիէյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել:
2. «Ջիարջի» ՍՊԸ-ի բողոքը բավարարել մասնակի.

Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել «Ջիարջի» ՍՊԸ-ի հայտի 15-րդ, 39-րդ, 54-րդ և 79-րդ չափաբաժնների մասով հայտը մերժելու մասին որոշումները:
- քննության առարկա դարձնել «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից 15-րդ, 39-րդ, 54-րդ և 79-րդ չափաբաժնների մասով որպես շտկում ներկայացված փաստաթուղթը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**